ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՆՇԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՏՈՆԸ

02.06.2018 11:14

2018 թվականի հունիսի 1-ին ՀՀ փաստաբանների պալատում բացվել էր ԵՍ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ ԵՄ խորագրով մանկապատանեկան հեղինակային նկարների ցուցահանդես: Երեխաների պաշտպանության օրվան ընդառաջ Փաստաբանների պալատի հայտարարած մրցույթին մասնակցել էր 80-ից ավելի երեխա Հայաստանի Հանրապետության ողջ տարածքից և Արցախից: Երեխաների երևակայությունն անսպառ էր, նրանք քննադատում էին անարդարությունը, խտրականությունը, կարգուկանոնի բացակայությունը, իրար չզիջելու տարածված սովորությունը: Շատ աշխատանքներում ոչ միայն քննադատություն էր, այլև հույս գեղեցիկ, պայծառ ապագայի, մարդասիրական օրինակների, լավատեսական գույների և քաղաքավարության տարածման հաղթանակի: Մրցութային նկարները մինչև հունիսի մեկը հրապարակվել էին սոցիալական ցանցի տարբեր հարթակներում և ոգևորող արձագանքներ էին ստացել: Մեծահասակները քննարկել էին հատկապես երեխաների տպավորիչ երևակայությունը, հարուստ գունապնակը և հասուն մոտեցումը իրականությանը: Հայտարարվել էր նաև խաղաղության, հայրենասիրության, ընկերության մասին կարգախոսների մրցույթ:

Հունիսի մեկին Փաստաբանների պալատի մրցույթներին մասնակցած բոլոր երեխաներին հանձնվել են մասնակցության հավաստագրեր և խորհրդանշական մրցանակներ: Ողջունելով մրցույթի մասնակիցներին՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը արդարության թեմայով զրույց-դաս է անցկացրել նրանց հետ:

Երեխաներին ոգևորել և անակնկալներ են մատուցել նաև փաստաբանական և իրավաբանական գրասենյակները:

«Կոնսիգլերի փաստաբանական գրասենյակ»-ը, «Ի Էլ Էլ գործընկերություն» իրավաբանական գրասենյակը, «Խաչատուրով» փաստաբանական գրասենյակը, «Զոհրաբյան և Գործընկերներ փաստաբանական գրասենյակ»-ը, ԱՐԱՏՏԱ իրավաբանական ընկերությունն իրենց ընտրած հաղթող նկարների հեղինակներին պարգևատրել են պատվոգրով և նվերներ են հանձնել: Երեխաներին նվերներով խրախուսել են նաև փաստաբան Լիանա Բալյանը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը, Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Նելլի Հարությունյանը: Երեխաներից շատերը սիրով իրենց նկարները նվիրել են մրցանակ հանձնողներին:

Մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը հաջորդել է «Ձմերուկ» մանկական ժամանցի կենտրոնի կողմից կազմակերպված մանկական տոնական համերգային շոու ծրագիրը, որին իր մասնակցությունն էր բերել Մանուկների «Մոլորակ» մանկապատանեկան վոկալ ստուդիան:Երեխաների տոնն ամբողջացրել են ծիծաղաշարժ դեկորներով ֆոտոբութը, հեքիաթի հերոսները, տոնական հյուրասիրությունն ու մեծ տորթը:

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՎԿԱՅԱԿԱՊԻՐ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ԵՐԵԽԱՆԵՐ
ԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻԶԱ
ԻՆ ՕՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՕՐ
Ե Տ ՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՊԱՏՎՈՒՐ
ՀԱ ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՊՐՈՑ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PHOTOBOOTH
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })